ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 55 - 56 (16552) ՇԱԲԱԹ, 15 ՀՈՒԼԻՍԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՎՐԱՍՏԱՆԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂԻՈՎ

«ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂԻՆ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

Հուլիսի 13-14-ին Բաթումիի «Հիլտոն» հյուրանոցում, Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման պետնախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, անցկացվեց «Վրաստանի եվրոպական ուղին՝ տարածաշրջանային կայունության ապահովում» 14-րդ միջազգային խորհրդաժողովը:

Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի գործադիր իշխանության, Եվրամիության եւ Արեւելյան գործընկերության երկրների ներկայացուցիչներ, Վրաստանի խորհրդարանի անդամներ, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակայնության, ակադեմիական շրջանների լրատվամիջոցների ու գործարար սեկտորի ներկայացուցիչներ:

Խորհրդաժողովի օրակարգում ընդգրկված են անվտանգ Եվրոպայի արդի ճարտարապետությունը, Եվրամիության եւ նրա ասոցիացված գործընկերների միջեւ համագործակցության նոր ձեւաչափերը, տարածաշրջանային կայունության ապահովման գործում Վրաստանի դերակատարությունը:

Խորհրդաժողովին ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Իր խոսքում, Վրաստանի նախագահը խոսեց եվրաինտեգրման ճանապարհին Վրաստանի ձեռքբերումների մասին:

- Վրաստանը եվրոպական գործընթաց է մուտք գործում ոչ միայն որպես եվրոպական բարիք որո-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԸՆԹԱՑՆ ԷՐ



Հուլիսի 11-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ «Արեւելյան գործընկերության» հարցերով Բուլղարիայի, Չեխիայի, Գերմանիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Ռումինիայի, Շվեդիայի եւ Սլովակիայի հատուկ հանձնարարությունների դեսպանների հետ:

Հանդիպման հիմնական թեման Բրյուսելում նոյեմբերի 24-ին ծրագրված Արեւելյան գործընկերության գագաթաժողովի եւ եվրաինտեգրման ճանապարհին Վրաստանի առաջընթացի հարցերն էին: Առանձնակի ուշադրություն հատկացվեց Եվրամիության հետ ասոցիացման օրակարգով նա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՄԱՔՈՒՐ ԷՋԻՑ ՍԿՍԵԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, կառավարող կուսակցությունը պատրաստ է մաքուր էջից սկսել բանակցություններ ընդդիմության հետ:

Ընդսմին, խորհրդարանի խոսնակը նշեց, որ Վրաստանի խորհրդարանի ծրագրված փոփոխություններով նախագիծը երրորդ ընթերցումից երկրորդը չի վերադարձվի, եւ խորհրդարանի կողմից այն վերջնականապես կհաստատվի աշնանային նստաշրջանում:

Իրակլի Կոբախիձեի պարզաբանմամբ, կուսակցությունների միջեւ փոխզիջման դեպքում, առկա է ընթացակարգային իրավական հնարավորություն փոփոխությունների արտացոլումը սահմանադրության մեջ:

- Ինչ վերաբերում է սահմանադրությանը, որը մեր կողմից ընդունվել է երկրորդ ընթերցմամբ, դրա վերադարձումը բացառվում է: Աշնանը մենք սահմանադրական փոփոխությունները կընդունենք երրորդ ընթերցմամբ: Սակայն, կան ընթացակարգային իրավական հնարավորություններ, որոնց միջոցով, փոխզիջման դեպքում, փոփոխությունները կարելի է ներկայացնել սահմանադրության մեջ,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Նրա խոսքով, մինչեւ երրորդ ընթերցումը մնացել է երեք ամիս, եւ այդ ժամանակը բավարար է, որպեսզի կառավարող թիմի եւ ընդդիմադիր կուսակցությունների միջեւ անցկացվեն խորհրդատվություններ, թեպետ խորհրդարանի նախագահը չհստակեցրեց, թե որ հարցերում կառավարող կուսակցությունը կարող է դիմել զիջումների:

ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՏԱՐԵԼ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանը լրիվությամբ կատարում է Եվրամիության առջեւ ստանձնած պարտավորությունները, եւ մենք տեսնում ենք դրա արդյունքները,- այդ մասին Բաթումիում անցկացվող միջազգային խորհրդաժողովում հայտարարեց էներգետիկական միության հարցերով եվրահանձնաժողովի փոխնախագահ Մարոշ Շեւովիչը:

Նա բարձր գնահատեց Եվրամիության հետ տնտեսական եւ քաղաքական ուղղություններով սերտ համագործակցության ձեւավորման տեսանկյունից վրացական իշխանության ջանքերը:

- Համոզված եմ, որ մեր համագործակցությունը հիանալիորեն արտացոլված է Եվրամիություն-Վրաստան հարաբերություններում: Անցյալ տարի ստորագրած Ասոցիացման համաձայնագիրը կարեւորագույն փաստաթուղթ է, եւ դրանից բխող ազատ առեւտրի պայմանավորվածությունն էլ արդեն արդյունքների է հանգեցրել: Մենք պաշտպանում ենք բոլոր այն առաջադիմական բարեփոխումները, որոնք Վրաստանը վերածում են «Արեւելյան գործընկերության» ծրագրի առաջատար լիդերի,- հայտարարեց Մարոշ Շեւովիչը:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵԱՀԿ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԿՈՄԻՍԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ

ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՆԵՐԿԱ ԷԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

Հուլիսի 12-ին ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գերագույն կոմիսարի գրասենյակի տնօրեն եւ կոմիսարի պաշտոնակատար Հենրիկ Վիլադսենը հանդիպում ունեցավ Վրաստանի խորհրդարանի անդամներ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ Ռուսլան Պողոսյանի, Սամվել Մանուկյանի, Ռուսլան Գաջիեւի, Մախիր Դարգիեւի եւ Ազեր Սուլեյմանովի հետ:

Հանդիպմանը առանձնակի ուշադրություն հատկացվեց Վրաստանում ազգային փոքրամասնությունների համակեցության հարցին:

Հանդիպմանը Վրաստանի խորհրդարանի անդամ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները նշեցին, որ Վրաստանում ազգամիջյան լարվածության առաջացման ոչ մի նախադրյալ չկա: Խորհրդարանականներն ընդգծեցին, որ Վրաստանում գոյություն ունի մուլտիմշակութային հնագույն ավանդույթ, եւ ներկա դրությամբ կրոնական տարբեր ուղղությունների, ազգային համայնքների եւ մշակույթների միջեւ տարվում է բարձր մակարդակի երկխոսություն: Առանձնակի ընդգծվեց այն փաստը, որ Վրաստանի ազգությամբ ոչ վրացի բնակիչներն իրենց համարում են երկրի լիարժեք քաղաքացիներ եւ իրենց մասնակցությունն են բերում երկրի շինարարության գործին:

Հանդիպմանը առնչվեցին նաեւ բիլինգային կրթական համակարգի զարգացման հարցին:

ՀՐԱՏԱՊ

ԿՐԿԻՆ ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, վերջին ժամանակներս լայն արձագանք էր առաջացրել հայկական վարորդական վկայականներով Վրաստանի քաղաքացիների տուգանման փաստերը: Թերթի նախորդ համարում հրապարակվեց հաղորդագրություն, ըստ որի, Վրաստանի ՆԳ նախարարի հրամանագրով սահմանված տուգանքները վերացվել էին, եւ ներկայացվել էր հայաստանյան վարորդական վկայականները վրացականով փոխելու ընթացակարգը: Հարցի մանրամասնությունների պարզաբանման համար, խմբագրությունը դիմեց Վրաստանի ՆԳ նախարարությանը:

Գերատեսչության իրավաբանական դեպարտամենտի տնօրեն **Թամար Չանելիձեն** մեր խնդրանքով պարզաբանեց, թե ինչ կարգով է սահմանվել օտար երկրների կողմից Վրաստանի քաղաքացիներին տրված վա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՎՐԱՍՏԱՆԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂԻՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նող երկիր, այլեւ իր ավանդն է ներդնում դրա զարգացման գործում: Մենք գոհունակությամբ կարող ենք ասել, որ այդ ուղու վրա վրացական պետության եւ վրացական հասարակայնության զարգացումը հաջող է ընթանում: Վրաստանը եվրոպական գործընթաց է ներդնում իր բացառիկ եվրոպական մշակույթը, բազմադարյա մշակույթը, որի հիմքերը կազմում են եվրոպական արժեքները,- հայտարարեց նախագահը:

Գիորգի Մարգվելաշվիլին անդրադարձավ նաեւ Ռուսաստանի կողմից իրականացվող սողացող բռնազավթմանը, հայտարարեց, որ Ռուսաստանի Դաշնության կողմից բացարձակապես ապորինաբար բռնազավթված տարածքները ոչ մի դեպքում չպետք է սպրդեն մեր քաղաքացիների եւ գործընկեր երկրների ուշադրությունից:

- Մենք մեր բոլոր բարեկամներին կոչ ենք անում լինել ծայրաստիճան սկզբունքային, երբ խոսքը վերաբերում է Վրաստանի շահերին, նրա տարածքային ամբողջականությանը,- ընդգծեց նախագահը:

Խորհրդաժողովում այդ թեմային անդրադարձավ նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Նրա խոսքով, երկիրը երբեք չի հաշտվի բռնազավթման հետ եւ հնարավոր բոլոր մեխանիզմները կօգտագործի, որպեսզի ապագա սերնդին ազատի այդ ծանր ժառանգությունից: Վարչապետը շնորհակալություն հայտնեց Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությանը՝ որպես միջազգային միակ մեխանիզմ, որը նշանակալի ավանդ է ներդնում դիմակայության գոտում օգոստոսյան պատերազմից հետո անվտանգության եւ կայունության ապահովման, իրավիճակի լարվածության կանխման տեսանկյունից:

- Ցանկանում եմ կրկին անգամ դիմել ձեզ եւ ասել, որ սա մեզ համար ամենագլխավոր հարցն է: Մենք երբեք չենք հաշտվի բռնազավթման հետ եւ հնարավոր բոլոր մեխանիզմները, բոլոր ամբիոնները, բոլոր խաղաղ ուղիները կօգտագործենք, որպեսզի հասնենք Վրաստանի միավորմանը ու ապագա սերունդն ազատենք այդ ծանր ժառանգությունից,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԼՐՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ՎՐԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ ԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Վերջին ժամանակներում, ռուսական կողմից սողացող բռնազավթման քաղաքականության իրականացման ֆոնի վրա, կրկին բարձրացվեց Աբաշիձե-Կարասին բանակցությունների անհեռանկարայնության թեման:

Պատասխանելով ծագած հարցերին՝ վրաց-ռուսական հարաբերություններում Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն հայտարարեց, որ Աբաշիձե-Կարասին երկխոսության ձեւաչափի շարունակումը արեւմտյան գործընկերների պահանջն է: Ինչպես նշեց Զուրաբ Աբաշիձեն, բանակցությունների շարունակման հարցով, վրացական կողմը ստացել է Եվրամիության 28 երկրների համաձայնությունը:

Խոսելով վերոնշյալ ձեւաչափի նշանակության մասին՝ Զուրաբ Աբաշիձեն հայտարարեց, որ այդ բանակցությունների շնորհիվ հաջողվեց հայրենիք վերադարձնել Վրաստանի բոլոր այն քաղաքացիներին, ովքեր լրտեսության մեղադրանքով գտնվում էին ռուսական բանտերում:

- Մենք կարողացանք ազատ արձակել մեր ութ քաղաքացիներին, ովքեր բազմամյա պատժաժամկետով գտնվում էին ռուսական բանտերում: Նրանք արդեն Վրաստանում են,- հայտարարեց Զուրաբ Աբաշիձեն եւ հավելեց, որ Ռուսաստանում լրտեսության մեղադրանքով դեռեւս գտնվում են մի քանի անձինք:

«ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱԼՅԱՆՍԻ» ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Վրաստանի խորհրդարանի «Հայրենասերների ալյանս» խմբակցության երեք անդամները այցելեցին Մոսկվա, որտեղ հանդիպում ունեցան Ռուսաստանի կառավարող «Եդինայա Ռոսիա» կուսակցության եւ տեղի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչների հետ:

Խորհրդարանականները քննարկեցին այցեգրային պայմանագրի դյուրացման հնարավորությունները եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցը: Հանդիպումն անցկացվեց Ռուսաստանի պետդումայի, ԱՊՀ-ի եւ Եվրասիական ինտեգրման հարցերով կոմիտեի նախագահ Լեոնիդ Կալաշնիկովի նախաձեռնությամբ:

ՍԵՐԳԵՅ ԼԱՎՐՈՎ. «ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԿՈՆՏԱԿՏՆԵՐԻ՝ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՎ»

Մոսկվան ընդգծում է իր պատրաստակամությունը ռուսական եւ վրացական խորհրդարանականների միջեւ կապերի հաստատման հարցում: Այդ մասին հայտարարեց Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը:

- Ինչ վերաբերում է Ռուսաստանի եւ Վրաստանի խորհրդարանականների միջեւ կոնտակտին, ապա մենք դա ողջունում ենք: Ավելին, մենք պատրաստ ենք կապեր հաստատել նաեւ այլ մակարդակներով,- հայտարարեց Սերգեյ Լավրովը եւ հավելեց, որ ներկա դրությամբ կապեր են գործում ՌԴ ԱԳ նախարարության եւ Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցով վարչապետի հատուկ ներկայացուցչի միջեւ:

- Պատրաստ ենք այլ ձեւաչափերի, որոնք ընդունելի կլինեն երկու կողմերի համար: Հարկ է խոսել իրար հետ, գտնել որոշումներ: Մենք հարեւաններ ենք, ընդհանուր շատ բան ունենք ե'ւ անցյալում, ե'ւ այսօր,- ընդգծեց Սերգեյ Լավրովը:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՋԵ. «ԱՅԴ ԱՅՑԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԷՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԵՏ ՈՉ ՄԻ ԿԱՊ ՉՈՒՆԵՐ»

Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի հայտարարությամբ, «Հայրենասերների ալյանսի» անդամների այցը ոչ մի կապ չունի կառավարող թիմի ու խորհրդարանական մեծամասնության հետ:

- Դա կուսակցական այց էր: Բնականաբար, այդ այցը ոչ մի կապ չի կարող ունենալ խորհրդարանի հետ, եւ այն հակադրվում է կառավարող թիմի եւ խորհրդարանականների մեծամասնության կողմից հայտարարած կուրսին: Ցանկացած կուսակցություն կարող է ծրագրել իր այցերը: Դրա հետ խորհրդարանը ոչ մի կապ չունի: Ինչ վերաբերում է կառավարող թիմի դիրքորոշմանը, ապա մենք նման այցերի հետ համամիտ չենք,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:



ԹՈՒՐՔԻԱ

ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ՝ 1.6 ՄԼՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր Հանրապետական ժողովրդական կուսակցության առաջնորդ Քեմալ Քըլըչդարօղլուի նախաձեռնած «Արդարության երթ»-ի եզրափակիչ հանրահավաքին մասնակցել է շուրջ 1 միլիոն 600 հազար մարդ:

Հունիսի 15-ին մեկնարկած «Արդարության երթ»-ն ավարտվել է հուլիսի 9-ին, Ստամբուլի Մալթեփե շրջանում: Քըլըչդարօղլուն եւ իր կողմնակիցներն այդ օրերի ընթացքում անցել են 436 կմ ճանապարհ:

Ուշագրավ է, որ Ստամբուլի նահանգապետարանը հայտարարություն է տարածել՝ նշելով, թե հանրահավաքին մասնակցել է ընդամենը 175 հազար մարդ:

ԵՄ

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԵՏ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅԱՆԳԻՐԸ ԱՐԺԱՆԱՑԱՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ

Եվրամիության բոլոր 28 անդամ երկրները հավանություն են տվել ԵՄ - Ուկրաինա ասոցիացման համաձայնագրին: Այս մասին ասված է Եվրամիության խորհրդի հայտարարության մեջ, որը հուլիսի 11-ին տարածվել է Բրյուսելում:

«Հուլիսի 11-ին Խորհուրդն ընդունեց որոշում Եվրամիության անունից ավարտելու Ուկրաինայի հետ ասոցիացման համաձայնագիրը»,- նշված է փաստաթղթում:

ՄՈՆՂՈԼԻԱ

ԽԱԼՄԱԱԳԻՅՆ ԲԱԹՈՒԼԳԱՆ՝ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

Հուլիսի 7-ին ընտրված՝ Մոնղոլիայի նախագահ Խալմաագիյն Բաթուլգան հուլիսի 10-ին երդում է տվել Պետական մեծ խուրալի պատգամավորների, Սահմանադրական դատարանի ղեկավարի եւ կառավարության անդամների առջեւ:

Խալմաագիյն Բաթուլգան Մոնղոլիայի նախագահ է ընտրվել այս տարվա հունիսի 7-ին՝ ստանալով ընտրողների 50,6 տոկոսի ձայնը: Նախագահական լիազորությունների ժամկետը կկազմի չորս տարի՝ համապատասխան Մոնղոլիայի սահմանադրությանը:

ԿՐԹԱԿԱՆ

ՄՐՑՈՒՅԹ՝ ԵՐԿՈՒ ԼԵԶՎՈՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ երիտասարդների համար մեկնարկել է երկու լեզվով դասավանդել ցանկացող օժանդակ ուսուցիչների ընտրական մրցույթը:

Մրցույթն անցկացվում է ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի «Ոչ վրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման» նախագծի շրջանակներում, եւ դրան մասնակցում են վրաց լեզվի նախապատրաստական հանրակրթական «1+4» ծրագրի մասնակից բակալավրիատի շրջանավարտները: Մրցույթի մանրամասները երիտասարդներին ներկայացրեցին Վրաստանի փոխվարչապետ, կրթության ու գիտության նախարար Ալեքսանդր Չեջելավան եւ հաշտեցման ու քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին:

- Այս մրցույթը, ինչպես նաեւ բոլոր այն քայլերը, որոնք մենք կատարել ենք ազգային փոքրամասնությունների կրթական որակի բարելավման տեսանկյունից, նշանակալից են: Ուսուցիչները կրթության որակի ապահովման հիմնական լծակն են, ուստի այս մրցույթի հայտարարումը ողջունելի է: Համոզված եմ, որ շատ շնորհալի երիտասարդների կնախապատրաստենք եւ կստանանք կրթության բարելավված որակ,- հայտարարեց Ալեքսանդր Չեջելավան:

Ընտրված օժանդակ ուսուցիչները կբաշխվեն ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանների ոչ վրացալեզու դպրոցներում, որտեղ պետական լեզվի ուսուցումը առանձնակի խրախուսում է պահանջում: Նրանք տեղի բնակիչներին կօգնեն լեզվի եւ առարկայի ինտեգրման դասերի ծրագրման ու անցկացման գործում: Երկու տարվա ընթացքում նրանց կնշանակվի 750 լարի աշխատավարձ, իսկ ծրագրում հաջողությամբ մասնակցած ուսուցիչների մագիստրատուրայի վարձը լրիվությամբ կֆինանսավորվի պետության կողմից:

Ինչպես հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին, ժողովրդավարական երկրի կառուցման համար, անհրաժեշտ է մեր բոլոր համաքաղաքացիների իրավահավասարությունը եւ առավելագույն ներգրավվածությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

- Դրան հասնելու ուղիներից մեկը պետական լեզվին լիարժեք տիրապետումն է, եւ այդ նպատակին է ծառայում ուսուցիչների ընտրական մրցույթը, որը «1+4» ծրագրի մասնակից երիտասարդներին հնարավորություն է ընձեռում՝ դառնալ դպրոցում վրաց լեզվի եւ համապատասխան առարկայի ուսուցիչներ,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմումը ներկայացնել հուլիսի 10-21-ը ներառյալ, հանրային ծառայության բյուրոյի կայք-էջում: Թեկնածուները պետք է ներկայացնեն հավաստագրված բուհի բակալավրիատի դիպլոմը եւ վրաց լեզվով նախապատրաստման հավաստագիրը: Ուսուցիչների ընտրության համար նախատեսված է երկու փուլ՝ դիմումների քննարկում եւ հարցազրույց:

Ընտրված թեկնածուները մինչեւ դպրոցներում բաշխվելը կանցնեն ինտենսիվ վերապատրաստում:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՆԱՊԱՐՀԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԸՆԹԱՑՆ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խատեսված միջոցառումների կատարման գործընթացին եւ ընթացիկ բարեփոխումներին: Վարչապետը մանրամասն տեղեկատվություն ներկայացրեց կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների չորս կետից կազմված ծրագրի մասին:

Գիորգի Կվիրիկաշվիլին առանձնակի ուշադրություն բեւեռեց Վրաստանի բռնազավթված տարածաշրջաններում ստեղծված իրավիճակի եւ վերջին ժամանակներում տեղ գտած իրադարձությունների վրա: Նա ընդգծեց, որ երկրի տարածքային ամբողջականությունն իշխանության թիվ մեկ առաջնահերթությունն է, եւ առանձնակի նշեց հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում Եվրամիության ու Արեւելյան գործընկերության դերը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՏՈՒԿ ԽՈՒՄԲ՝ ԱՎՏՈԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի ներքին գործերի նախարարությունում անցկացվեց աշխատանքային հանդիպում՝ կապված ավտոդպրոցների հավաստագրման հարցի հետ:

Հանդիպմանը ներկա էին Վրաստանի ՆԳ փոխնախարար Դավիթ Վարդիաշվիլին, նախարարության սպասարկման գործակալության ղեկավար Նիկա Գելաշվիլին, կրթության եւ գիտության նախարարության, ավտոդպրոցների եւ ճանապարհային երթեւեկության անվտանգության հարցերի շուրջ աշխատող ոչ կառավարական կազմակերպությունների աշխատակիցները:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին վարորդական իրավունքի ստացման համար գործնական քննությունը իրատեսական երթեւեկության պայմաններում հանձնման եւ այդ գործընթացում ավտոդպրոցների ներգրավման հարցը: Խոսեցին նաեւ ավտոդպրոցներում դասավանդվող ուսումնական ծրագրերի եւ այն ուղղությունների մասին, որոնց զարգացման արդյունքում հնարավոր է ավտոդպրոցներում բարձրացնել ուսման որակը: Ելնելով օրենսդրական փոփոխություններից՝ կհիմնվի նոր միասնական չափորոշիչ, որի հիման վրա հավաստագրված ավտոդպրոցները կկարողանան պատրաստել որակյալ վարորդներ:

ՆԳ նախարարության ներկայացուցիչներն ունկնդրեցին օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ոչ կառավարական կազմակերպությունների եւ ավտոդպրոցների ներկայացուցիչների գնահատականները: Գերատեսչության ներկայացուցիչները հյուրերին ներկայացրին նաեւ ՆԳ նախարարության սպասարկման գործակալության կողմից այդ ուղղությամբ իրականացրած եւ ծրագրված նախագծերը:

Հանդիպմանը, ավտոդպրոցների հավաստագրման եւ վարորդական վկայականի ստացման համար գործնական քննությունը իրատեսական երթեւեկության պայմաններում հանձնման հարցի կապակցությամբ, որոշվեց հիմնել հատուկ աշխատանքային խումբ:



ՄԻԽԵԻԼ ՋԱՆԵԼԻՋԵՆ՝ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հայտարարությամբ, Վրաստանի արտաքին գործերի նախարար, 36-ամյա Միխեիլ Ջանելիձեն նշանակվել է երկրի փոխվարչապետ:

Վարչապետն ընդգծեց, որ Միխեիլ Ջանելիձեի ջանքերով, երբ նա զբաղեցնում էր էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարարի պաշտոնը, հաջողությամբ անցկացվեցին Եվրամիության հետ ազատ առեւտրի մասին բանակցությունները, եւ այն ավարտվեց համապատասխան համաձայնագրի ստորագրմամբ:

ԻԼԻԱ ԷԼՈՇՎԻԼԻՆ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հրամանագրով, 42-ամյա Իլիա Էլոշվիլին նշանակվել է Վրաստանի էներգետիկայի նախարար: Վարչապետի խոսքով, նա 2012 թվականից զբաղեցնում էր էներգետիկայի առաջին փոխնախարարի պաշտոնը եւ նշանակալի ավանդ է ներդրել բոլոր այն նախագծերում, որոնք իրականացվել են նախարարության կողմից:

Հիշեցնենք, որ էներգետիկայի նախարարի պաշտոնն ազատվեց այն ժամանակ, երբ Կախի Կախալաձեն պաշտոնաթող եղավ՝ որպես Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու:

ՇՁԻՄՈՆԱՎԼԵԳՆԻՍ ՍԱՄՍԱԽՈՒՐՈ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՀԱՐԹԱԿ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պատվիրակությունը, Վրաստանի ֆինանսների առաջին փոխնախարար, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլու ղեկավարությամբ, Բրյուսելում մասնակցեց համաշխարհային մաքսային կազմակերպության (WCO) խորհրդի ամենամյա նստաշրջանին:

Վերոնշյալ խորհուրդը Համաշխարհային մաքսային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է եւ նշանակալից հարթակ է ներկայացնում տարբեր երկրների միջեւ մաքսային ոլորտում համագործակցության խորացման տեսանկյունից:

Նստաշրջանի շրջանակներում, Վրաստանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջեւ ստորագրվեց մաքսային վարչությունների միջեւ համագործակցության համաձայնագիրը: Սույն համաձայնագիրը նախատեսում է այնպիսի նշանակալից թեմաներ, ինչպիսիք են՝ մաքսատուրքի չափի սահմանման կարգի ապահովում, միջազգային բեռնափոխադրումների շղթայի անվտանգության չափորոշիչների պահպանում, Վրաստանից ԱՄՆ ուղղությամբ եւ հակառակը, իրականացվող արտահանումների վերահսկման իրավական մեխանիզմներ եւ այլն:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂՈՒՄ

«Վրաստան» թերթի 2017 թվականի հուլիսի 8-ի N 53-54 համարում զետեղված «Ընթացիկ տարվա օգոստոսի ինքնակառավարման քաղաքների թիվը նվազեցվում է» հոդվածում սպրդել է վրիպում:

Այսպես. հոդվածի վերջին պարբերությունն ընթերցել հետեւյալ կերպ. «Բացի այդ, օգոստոսի 1-ից վերացվում է քաղաքապետարանի վարչակազմի ղեկավարի, քաղաքի սակրեբուլոյի նախագահի պաշտոնը, որը տեղական իշխանության ամենաբարձր անձն էր»:

ՀՐԱՏԱՊ

ԿՐԿԻՆ ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րորդական վկայականների գործողության ժամկետի եւ իրավաբանական իրավասության կարգը:

Վրաստանի ներքին գործերի նախարարի 2012 թվականի օգոստոսի 1-ի թիվ 598 հրամանագրով, օտար երկրի կողմից Վրաստանի քաղաքացուն տրված վարորդական վկայականի գործողության ժամկետի եւ դրա իրավաբանական ուժի հարցը կարգավորվում է հետեւյալ կերպ.

Վրաստանի տարածքում օտար երկրի կողմից տրված վարորդական իրավունքի իրավաբանական ուժի հարցը կապակցված է օրացուցային տարվա ընթացքում Վրաստանի քաղաքացու կողմից Վրաստանի պետական սահմանի առաջին անգամ հատման ամսաթվի հետ: Վարորդական վկայականը ուժի մեջ է օրացուցային տարվա ընթացքում սահմանի առաջին հատման օրվանից մեկ տարվա ընթացքում: Իսկ վերոնշյալ ամսաթիվը հաշվարկվում է յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում Վրաստանի տարածք անձի կողմից առաջին մուտք գործելու ամսաթվից:

Մեկ տարվա ժամկետի սպառումից հետո, եթե անձը չի հատել պետական սահմանը եւ մուտք չի գործել Վրաստանի տարածք, ապա նրա վարորդական իրավունքը կորցնում է իրավաբանական ուժը եւ սահմանվում է տուգանք:

Օրինակ՝ եթե Վրաստանի քաղաքացին, որը Վրաստանում օգտվում է օտար երկրի կողմից տրված վարորդական իրավունքից, տարվա ընթացքում, երբ առաջին անգամ Վրաստան է մուտք գործել 2017 թվականի օգոստոսի 10-ին, ապա նրա վարորդական իրավունքը Վրաստանի տարածքում օրինական է մինչեւ 2018 թվականի օգոստոսի 10-ը: Եթե անձը մինչեւ 2018 թվականի օգոստոսի 10-ը չի հատել սահմանը, ապա 2018 թվականի օգոստոսի 11-ից նրա վարորդական իրավունքը Վրաստանի տարածքում կորցնում է իրավաբանական ուժը:

Բերեմ երկրորդ օրինակը, եթե Վրաստանի քաղաքացին, որը Վրաստանում օգտվում է օտար երկրի կողմից տրված վարորդական իրավունքից, առաջին անգամ Վրաստան է մուտք գործել 2017 թվականի օգոստոսի 10-ին, երկրի տարածքից դուրս է եկել նույն թվականի օգոստոսի 20-ին եւ ետ վերադարձել 2018 թվականի հունվարի 10-ին, ապա նրա վարորդական իրավունքի ժամկետի հաշվարկը սկսվում է օրացուցային տարվա ընթացքում սահմանը առաջին անգամ հատելուց՝ 2018 թվականի հունվարի 10-ից:

Եվ վերջապես, եթե Վրաստանի քաղաքացին, որը Վրաստանում օգտվում է օտար երկրի կողմից տրված վարորդական իրավունքից, մեկ տարվա ընթացքում առաջին անգամ մուտք է գործել 2017 թվականի օգոստոսի 10-ին, երկրի տարածքից դուրս է եկել նույն թվականի սեպտեմբերի 20-ին եւ վերադարձել դեկտեմբերի 25-ին, այդ դեպքում նրա վարորդական իրավունքի գործողության ժամկետը սահմանվում է մինչեւ 2018 թվականի օգոստոսի 10-ը, քանի որ նույն օրացուցային տարվա ընթացքում սահմանի հատումը չի գործում վարորդական իրավունքի իրավաբանական ուժի վրա:

Վերոնշյալ կարգավորումը բովանդակությամբ համապատասխանում է մինչ այդ գործող նորմերին, այն տարբերությամբ, որ վարորդական իրավունքի իրավաբանական ուժի շնորհման ժամկետը հաշվարկվում է անձի կողմից առաջին անգամ Վրաստան մուտք գործելու օրվանից՝ օրացուցային տարվա ընթացքում, եւ ոչ թե նրա կողմից Վրաստանի պետական սահմանի վերջին հատման օրվանից:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

Դ.ՔՈՒՄՍԻՇՎԻԼԻ. «ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ»

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակի արդյունքների հանրագումարման, գործադիր իշխանության կողմից իրականացվող ֆինանսական եւ հարկային քաղաքականության, նպաստավոր բիզնես-միջավայրի ստեղծման ուղղությամբ իրականացված միջոցառումների արդյունքում առկա տեղաշարժերի հարցերով մենք զրուցեցինք Վրաստանի ֆինանսների նախարար Դմիտրի Քումսիշվիլու հետ:

- Պարոն նախարար, կիսամյակային տվյալների հանրագումարումը յուրատեսակ չափորոշիչ է կատարված եւ առաջիկա աշխատանքների արդյունքների կանխագծման համար: Այդ տեսանկյունից ինչպե՞ս կգնահատեիք անցած կիսամյակը:

- Նախ հիշեցնեմ, որ, 2017 թվականի պետբյուջեն ծրագրելիս, մենք ելնում էինք տարեկան 4 տոկոս տնտեսական աճի հաշվարկից: «Վրաստանի 2017 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի համաձայն, մուտքերը ծրագրված էին 11,5 միլիարդ լարիի մակարդակով, իսկ փոխանցումները կազմում էին 11,4 միլիարդ լարի: Թեպետ ստացվեցին ավելի քան խոստումնալից արդյունքներ: Մասնավորապես, 2017 թվականի առաջին վեց ամիսներին պետական մուտքերը կազմեցին շուրջ 4,7 միլիարդ, փոխանցվել է ավելի քան 5,3 միլիարդ լարի: Ինչ վերաբերում է տնտեսական աճին, ապա առաջին հինգ ամիսների նախնական տվյալներով, տնտեսական իրատեսական աճը կազմեց 4,5 տոկոս, իսկ մայիսին այն հասավ 5,3 տոկոսի: Առաջին կիսամյակում պետական բյուջեի մուտքերի առաջադրանքը կատարվել է 106,4 տոկոսով, եւ բյուջե է մուտքագրվել 4748,2 միլիարդ լարի: Միաժամանակ, պետական բյուջեում հարկային մուտքերը կազմել են 4,283 միլիարդ լարի, ինչը կազմում է ծրագրի 105,4 տոկոսը: Նախարարի խոսքով, առաջին վեց ամիսների ընթացքում պետական փոխանցումները կազմել են 5,315 միլիարդ լարի, ինչը նշանակում է, որ կիսամյա առաջադրանքը կատարվել է 95, իսկ տարեկան առաջադրանքը՝ 46 տոկոսով: Ընդ որում, անցած առաջին վեց ամիսների համեմատությամբ, այդ ցուցանիշը ավելացել է 13,4 տոկոսով, այսինքն՝ 629,8 միլիոն լարիով:

Աստիճանաբար իրեն զգացնել է տալիս նաեւ կառավարության ֆինանսական քաղաքականության ազդեցությունը: Մասնավորապես, օտարերկրյա ներդրումների հարցով, օրինակ, առաջին եռամսյակում այդ ցուցանիշն ավելացել է 4 տոկոսով:

- Ձեր կարծիքով, ինչո՞վ է պայմանավորված տնտեսական եւ ֆինանսական ոլորտում վավերացված նման առաջընթացը:

- Ընդհանրապես, տնտեսական ոլորտում առանձնանում են մի շարք գործոններ՝ ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին: Տվյալ պարագայում նման դրական աճը, ըստ իս, պայմանավորված է առաջին եռամսյակում արտահանման ծավալի 28,7 տոկոսի ավելացման հետ: 14,9 տոկոսով ավելացել է նաեւ ապրանքաշրջանառությունը: Բացի այդ, տնտեսական աճի վրա ազդեցություն է գործել նաեւ օտարերկրյա զբոսաշրջիկների թվի 13,4 տոկոսի ավելացումը, որը դրամական տեսանկյունից թույլ տվեց բյուջեն համալրել 205 միլիոն դոլարով: Ավելացան նաեւ դրամական փոխանցումները: Անցած հինգ ամիսների ընթացքում, ընդհանուր առմամբ, փոխանցվել է 433 միլիոն դոլար:

- Ձեր կողմից բերված թվերը տպավորիչ են, սակայն, բոլոր դեպքերում, առաջընթացի չափորոշիչը սոցիալական մակարդակն է: Ի՞նչ կասեիք այս կապակցությամբ, մասնավորապես՝ նոր աշխատատեղերի բացման հարցով:

- Միանգամից ասեմ, որ մեր կառավարության գործունեության ամենագլխավոր ձեռքբերումը գործազրկության մակարդակի նվազեցումն է: 2012-2016 թվականներին գործազրկության մակարդակը 15-ից նվազել է մինչեւ 11,8 տոկոս, իսկ դա նշանակում է, որ հետեւաբար, առնվազն 100 հազար մարդ աշխատանք, այսինքն՝ նաեւ եկամուտ ունի: Ինչպես վկայում են Համաշխարհային բանկի տվյալները, 2010-2014 թվականներին Վրաստանում շուրջ 490 հազար մարդ հաղթահարել է ծայրագույն աղքատության մակարդակը:

- Դուք Ձեր խոսքում նշեցիք կառավարության ֆինանսական քաղաքականության դրական ազդեցության մասին: Ի՞նչ ի նկատի ունեիք:

- Առաջին հերթին՝ բանկային ավանդների եւ վարկերի լարիացման գործընթացը: Ի նկատի ունեցեք, դա պարտադրված կուրս չէ եւ նախատեսված է առնվազն 7-8 տարվա համար, սակայն, ներկա դրությամբ, բնակչության 25 տոկոսը օգտվում է դրանից:

- Սոցիալական մակարդակի բնորոշիչներից մեկը ենթակառույցների հետ կապված իրավիճակն է: Անցած կիսամյակում ի՞նչ է արվել այս ուղղությամբ:

- Շատ բան: Օրինակ, ենթակառույցային նախագծերի իրականացման արագացման արդյունքում, առաջին վեց ամիսների ընթացքում միասնական բյուջեից կապիտալ ծախսերի համար փոխանցվել է 1,1 միլիարդ լարի, ինչը 269,7 միլիոն լարիով գերազանցում է անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշը: Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությունը, 2017 թվականի առաջին վեց ամիսների ընթացքում, պետբյուջեից ստացել է 582,5 միլիոն լարի, ինչը 64 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը, եւ այն կազմում է պետական առաջադրանքի 46,3 տոկոսը:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՈԼՈՐՏ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ՇԱՏ ՇԱՀԱՎԵՏ

Վրաստանի էկոնոմիկայի ու կայուն զարգացման նախարարության զբոսաշրջության ազգային վարչության ղեկավար Գիորգի Չոգովաձեն երկրում զբոսաշրջության ոլորտի զարգացման ու բարեփոխումների մասին զրուցեց «Վրաստան» թերթի թղթակցի հետ:

- Վրաստանում տարեցտարի ընդլայնվում է զբոսաշրջության սեկտորը: 2016 թվականին օտարերկրյա այցելուների թիվը հասավ 6 միլիոնի, իսկ միջազգային զբոսաշրջությունից ստացած եկամուտը գերազանցեց 2 միլիարդ դոլարը: Ընթացիկ տարվա առաջին եռամսյակի տվյալներով, օտարերկրյա զբոսաշրջիկների թիվը ավելացել է 11,4, միայն հուլիսին, նախորդի համեմատությամբ՝ 26 տոկոսով: Բնականաբար, այդ ամենն ավտոմատորեն ավելացնում է նաեւ ստացվող եկամուտները: Այսօրվա տվյալներով, զբոսաշրջիկները ո՞ր տեսարժան վայրերն են գերադասում, ո՞ր վայրերն ունեն հեռանկարային նշանակություն:

- 2017 թվականի հունվար-ապրիլին Վրաստան է այցելել 1 776 719 օտարերկրյա քաղաքացի, ինչը 11,1 տոկոսով գերազանցում է 2016 թվականի համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշը: Ստույգ տվյալներով, թե ո՞ր տեսարժան վայրերն են գերադասում զբոսաշրջիկները, դեռեւս չունենք, սակայն մեծ պահանջարկ են վայելում Թբիլիսին եւ լեռնադահուկային հանգստավայրերը:

Զբոսաշրջության սեկտորի զարգացման հեռանկարները բավականին շատ են, այդ թվում է նաեւ գործարար զբոսաշրջությունը, մասնավորապես՝ տարբեր խորհրդաժողովների, սեմինարների, ցուցահանդեսների եւ միջազգային այլ միջոցառումների անցկացումը:

Մենք արդեն անցկացրել ենք մի շարք միջազգային միջոցառումներ, մասնավորապես, 2016 թվականին Թբիլիսիում անցկացրեցին գլոբալ զբոսաշրջության միջազգային խորհրդաժողով եւ լեռնային զբոսաշրջության զարգացման գիտաժողով:

Բացի գործարար զբոսաշրջությունից, առկա են նաեւ հեռանկարային այլ ուղղություններ, որոնք հարկ է զարգացնել:

- Ի՞նչ ծրագրեր ունեք 2017 թվականի համար: Ինչպե՞ս եք ծրագրում ավելացնել օտարերկրյա զբոսաշրջիկների թիվը:

- Զբոսաշրջության ազգային վարչությունը 2017 թվականի սկզբից սկսել է մի քանի նոր նախագծեր, այդ թվում՝ «զեղչերի շաբաթը», որն անցկացվում է տարածաշրջաններում եւ նախատեսում՝ զբոսաշրջության ծառայությունների սակագների նվազեցում: Այսպիսով, իրականացվում է տարածաշրջանի ժողովրդայնացում եւ ներքին զբոսաշրջության զարգացում:

Շարունակվում է նաեւ «Ծանոթացի'ր Վրաստանին» նախագիծը, որը նույնպես ուղղված է ներքին զբոսաշրջության զարգացմանը:

Նախագծեր ունենք նաեւ արտաքին զբոսաշրջության զարգացման ուղղությամբ: Մասնավորապես, ակտիվ մարկեթինգային հանգանցային արշավ է սկսվել 14 ուղղություններով, ինչպիսիք են՝ Ռուսաստանը, Էմիրաթները, Գերմանիան, Իտալիան, Իսրայելը, Լեհաստանը, Բելառուսը, Հայաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Թուրքիան, Լիտվան եւ Լատվիան: Այդ երկրներում ակտիվորեն

գովազդվում է Վրաստանի զբոսաշրջության ներուժը, մասնավորապես, ծովային եւ լեռնային հանգստավայրերը, գինեգործությունը, խոհանոցը, մշակույթը եւ արկածային զբոսաշրջությունը:

Բացի այդ, մարկեթինգային ակտիվ արշավ է տարվում միջազգային զբոսաշրջության հեղինակավոր, մասնավորապես՝ tripadvisor եւ expedia կայք-էջերում:

Մենք շարունակում ենք Վրաստան հրավիրել միջազգային հեղինակավոր միջոցների՝ BBC, National Georgraphic. Vogue. Wall Street Journal եւ այլնի լրագրողներին:

Աշնանը մենք մտադիր ենք անցկացնել ավանդական Travel Media Forum-ը, ինչպես նաեւ ծրագրել ենք անցկացնել թվային մարկեթինգի TOUCH միջազգային գիտաժողովը: Նաեւ շարունակում են զարգացնել զբոսաշրջության ենթակառույցները եւ անցկացնում վարժանքներ մատուցվող ծառայությունների որակի բարելավման համար:

Այսպիսով, մենք ակտիվորեն գործում ենք եւ հույս ունենք, որ 2017 թվականը կլինի առավել հաջողակ զբոսաշրջության տեսանկյունից:

- Դուք, հավանաբար, ունեք տվյալներ, թե ո՞ր երկրների քաղաքացիներն են գերադասում Վրաստանը:

- Բնականաբար, նման տվյալներ ունենք: Այդ երկրների առաջին հնգյակում են Ադրբեջանը, Հայաստանը, Թուրքիան, Ռուսաստանն ու Ուկրաինան: Զգալիորեն ավելացել է նաեւ Եվրամիության երկրներից ժամանող զբոսաշրջիկների թիվը:

- Իսկ ի՞նչ կասեիք զբոսաշրջության ենթակառույցների վարկանիշում Վրաստանի դիրքերի մասին:

- Զբոսաշրջության ենթակառույցների վարկանիշում Վրաստանը ներկայումս զբաղեցնում է 70-րդ հորիզոնականը: Հիշեցնենք, որ այդ վարկանիշը 136 երկրների ցուցակով կազմել է համաշխարհային տնտեսական գագաթաժողովը:

Վարկանիշը սահմանում է երկրում առկա զբոսաշրջության սպասարկումների մատչելիությունն ու որակը: Վարկանիշի ձեւավորման ընթացքում համաշխարհային տնտեսական գագաթաժողովի փորձագետները, չափարոշիչների հաշվարկմամբ, հաշվի են առնում նաեւ զբոսաշրջությանը տրամադրվող բնակտարածքի որակն ու մեքենաների վարձակալման ցուցանիշը:

Հիշեցնեմ, որ վարկանիշը գլխավորում է Ավստրիան, որին հետեւում են Իսպանիան եւ ԱՄՆ-ը: Լավագույն տասնյակում ընդգրկված են նաեւ Պորտուգալիան, Խորվաթիան, Շվեյցարիան, Բրիտանիան, Ավստրալիան, Գերմանիան ու Կանադան: Ցուցակը եզրափակում է Բուրունդին:

Ինչ վերաբերում է մեր անմիջական հարեւաններին, ապա Ռուսաստանը վարկանիշում զբաղեցնում է 55-րդ հորիզոնականը, Ուկրաինան՝ 71-րդ, Հայաստանը՝ 74-րդ, Ադրբեջանը՝ 89-րդ, Թուրքիան՝ 42-րդ, իսկ Ղազախստանը՝ 97-րդ տեղը:

- Սկսվում է ծովափնյա սեզոնը: Ինչպիսի՞ք են ձեր սպասումները ներկայիս ծովափնյա սեզոնի հեռանկարների կապակցությամբ:

- Սպասումներն ավելի քան լավատեսական են: Մենք կարողացանք զգալիորեն ավելացնել զբոսաշրջիկների հոսքը ավանդական գործընկեր երկրներից, եւ ներկայումս նշանակալից է մուտք գործել նոր շուկաներ: Այս տարի մենք սպասում ենք օտարերկրյա զբոսաշրջիկների թվի ավելացում եւ համոզված ենք, որ այդ միտումն առաջիկայում էլ կշարունակվի:

Ընդհանուր առմամբ, զբոսաշրջությունը մնում է Վրաստանի էկոնոմիկայի առաջնահերթային ուղղություններից մեկը, քանի որ օտարերկրյա զբոսաշրջիկների թվի ավելացումը նշանակում է այդ ոլորտում զբաղված բնակչության եկամուտների եւ թվաքանակի ավելացում: